ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստան

Կորպորատիվ սոցիալական ներդրումներ

***Ծրագրի նպատակը**՝ խթանել Հայաստանի մասնավոր սեկտորի մասնակցությունը երկրի սոցիալական զարգացմանը:*

2006 թ-ին Եվրասիա համագործակցություն հիմնադրամն անցկացրեց Հայաստանում կորպորատիվ սոցիալական ներդրումների վիճակի գնահատում: Ուսումնասիրությունն անցկացվեց Հայաստանի խոշոր և միջին ձեռնարկությունների ներկայացուցիչների շրջանում: Ուսումնասիրության առարկան էին կորպորատիվ սոցիալական ներդրումների ընկալումը, առկա փորձը և այն ընդլայնելու հիմնական խոչընդոտները, ինչպես նաև այն հիմնական շարժառիթները, որոնցով ընկերությունները ներգրավվում են կորպորատիվ սոցիալական ներդրումների գործում:

Համաձայն գնահատման արդյունքների՝ Հայաստանի գործարարների շրջանում կորպորատիվ սոցիալական ներդրումների ընկալումը շատ թույլ է: Կան փոքր թվով գործարար ընկերություններ, որոնք կանոնավոր կերպով ներգրավված են բարեգործական աշխատանքներում: Այդ ընկերությունների կողմից արված նվիրատվությունները միանգամյա վճարներ են և հանրության կարիքներին ու ընկերության նպատակներին արձագանքող երկարաժամկետ ռազմավարության մաս չեն կազմում: Հայ գործարարները դեռևս անտեսում են հասարակական կազմակերպությունների հնարավոր դերը կորպորատիվ սոցիալական ներդրումների գործընթացում: Գործարար ընկերությունների բարեգործական աշխատանքները և քաղաքացիական հասարակության ու իշխանությունների նախաձեռնությունները համակարգելու խնդիր կա:

Ծրագրով նախատեսված է՝

- զարգացնել գործարար ընկերությունների կորպորատիվ սոցիալական ներդրումների ռազմավարություն մշակելու կարողությունները,
- ուժեղացնել բիզնեսի և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը սոցիալական ծրագրերում,
- ստեղծել ցանց, որի միջոցով հայ գործարարները հնարավորություն կունենան համագործակցել արտասահմանյան ընկերությունների, հասարակական կազմակերպությունների ու պետական մարմինների հետ:

Ձեռներեցների կարողությունների զարգացում

2007թ. օգոստոսին Երևանում տեղի ունեցավ երկօրյա սեմինար, որը նվիրված էր կորպորատիվ սոցիալական ներդրումների փորձին: Սեմինարին մասնակցում էին Հայաստանի գործարար հատվածի ավելի քան քսան ներկայացուցիչներ: Կոկա-կոլա ընկերությունը, Էյչ-Էս-Բի-Սին, Մայքրոսոֆթը, Աշտարակ-կաթը, Սինոփսիսը, Ափորիա հանքային ջրերը և շատ այլ ընկերություններ ներկա էին սեմինարին: Գործարար հատվածի ներկայացուցիչներն ունկնդրեցին ելույթներ կորպորատիվ սոցիալական ներդրումների բնագավառում ռուսական բիզնեսի և Բրիթիշ-Արմենիա փոբակո ու Ալկո ընկերությունների փորձի մասին: ԱՄՆ-ից և Միացյալ Թագավորությունից եկած անկախ փորձագետները ներկայացրեցին ամերիկյան և բրիտանական ընկերությունների սոցիալական ներդրումների փորձի մասին ուսումնասիրության դեպքերը:

Սեմինարից հետո, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը հովանավորեց Մոսկվայում վեց հայ գործարարների ու ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալի ուսուցողական այցը, որտեղ նրանց հնարավորություն ընձեռվեց այցելել ռուսական այն ընկերություններին, որոնք ակտիվ են կորպորատիվ սոցիալական ներդրումների գործում: Երկու ընկերություններ՝ «Աշտարակ-կաթ և «Արմսվիսբանկ ընկերությունները ծրագրում են շարունակել կորպորատիվ սոցիալական ներդրումների ռազմավարություններ մշակելու նպատակով իրենց համագործակցությունը հիմնադրամի հետ:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1993 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետևորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Ապագայում Եվրասիա համագործակցություն հիմնադրամն աշխատելու է իր գործակից բիզնես ընկերությունների հետ՝ վերջիններիս կարողությունները զարգացնելու նպատակով: Աշխատանքներն ուղղված կլինեն կորպորատիվ սոցիալական ներդրումների այնպիսի ռազմավարությունների մշակմանը և իրականացմանը, որոնք կարձագանքեն յուրաքանչյուր ընկերության առաքելությանը, բիզնես-ծրագրերին և հետաքրքրություններին: Հիմնադրամը ենթադրում է, որ ծրագրով նախատեսված միջոցառումներին ներգրավելով օտարերկրյա ընկերությունների և կորպորատիվ սոցիալական ներդրումներ խթանելու փորձ ունեցող այլ հասարակական կազմակերպությունների՝ հնարավոր կլինի հայկական ընկերությունների շրջանում զարգացնել միջազգային լավագույն փորձի համապարփակ ընկալում: Դրանում աջակցելու է նաև Հայաստանում առևտրի ամերիկյան պալատը: 2008 թ-ին հիմնադրամը ծրագրում է նաև ընտրել տեղական մեկ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի հետ համատեղ կմշակվի և կմեկնարկի կորպորատիվ սոցիալական ներդրումների ոլորտում հայ գործարարների մասնագիտանալու կուրս:

Օրենսդրական փոփոխություններ

Հայաստանում գործող հարկային օրենսդրությունը գործարարներին չի ապահովում բավարար պայմաններով, որպեսզի նրանք բարեգործական աշխատանքներ կատարեն: 2008 թ-ին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը համեմատական վերլուծություն է անցկացնելու ոլորտում գործող հայկական և արտասահմանյան օրենսդրության միջև: Այդ հարցում հիմնադրամին աջակցելու են ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը և գործարար ընկերությունները, որոնք կառաջարկեն օրենսդրական փոփոխություններ՝ կորպորատիվ սոցիալական ներդրումների ոլորտը կատարելագործելու ուղղությամբ:

Կորպորատիվ սոցիալական ներդրումների մասին հանրային իրազեկում

Ծրագրի գործողությունների վերաբերյալ հանրային իրազեկումն իրականացվում է զանգվածային լրատվամիջոցների ակտիվ մասնակցությամբ: Եվրասիա համագործակցություն հիմնադրամը հովանավորեց տեղական թերթի լրագրողի Մոսկվա կատարած ուսուցողական այցը: Արդեն իսկ կազմակերպվել է մամուլի ասուլիս, որի ժամանակ ներկայացվեցին այցի արդյունքներն ու ծրագրի գործողությունները:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նունե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան

Արտաշես Թերզյան
Investment Bank Trust, National Bank Trust, Ռուսաստան

Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ

Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի մշակույթի և քաղաքակրթության կենտրոն

Արա Համազասպյան
«Իզմիրլյան հիմնադրամի Երևանյան գրասենյակ

Արսեն Ղազարյան
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փ. 56
Հեռ.՝ (374 10) 58 60 95
Ֆաքս՝ (374 10) 58 60 96

info@epfound.am
www.epfound.am